

Քաղցը և ճարպակալումը. անառողջ սնուցման երկու բևեռներում



Աշխարհում այսօր 200 միլիոնով ավելի պակաս մարդ են քաղցած, քան 20 տարի առաջ, սակայն 805 մլն մարդ մախկինի պես ամեն օր քաղցած են, սա մուլտրակի յուրաքանչյուր իններորդ բնակիչն է: Միաժամանակ աշխարհի տարբեր երկրներում 500 միլիոնից ոչ պակաս մարդ տառապում է ճարպակալումից: «Բազմաթիվ երկրների կառավարությունները պետք է իրենք իրենց հարց տան՝ ինչպես կարող են ծանր դիստրոֆիան և ծայրաստիճան ճարպակալումը կողք կողքի գոյատևել նույն երկրում կամ նույն քաղաքում», - հայտարարել է ԱՀԿ գլխավոր տնօրեն Մարգարեթ Չեմը:

Հայաստանը քաղցի դեմ պայքարում



Ըստ «Աշխարհում պարենի վտանգավորության վիճակը» 2014-ի սեպտեմբերին հրապարակված ՄԱԿ-ի զեկոյցի՝ Հայաստանն այն 10 երկրների թվում է, որոնք իրենց բնակչության թվին համամասնաբար զգալիորեն նվազեցրել են քաղցած մարդկանց ընդհանուր թիվը:

«Զրոյական քաղց» ծրագիր

2012-ի հունիսին Ռիո+20 կայուն զարգացման համաժողովում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հռչակած «Զրոյական քաղց» ծրագիրը նախատեսում է 5 ուղղություն՝ պարենի 100%-անոց մատչելիություն, մինչև 2 տարեկան երեխաների մոտ թերաճության բացակայություն, բոլոր պարենային համակարգերի կայունություն, փոքր ֆերմերների արտադրողականության և նրանց եկամուտների 100% ավելացում, պարենի կորուստների և բափոցների բացակայություն:

Կայուն զարգացման նպատակները մինչև 2030 թ.



ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բաց աշխատանքային խումբը անցյալ տարվա հուլիսին ներկայացրել է մի շարք գաղափարներ և առաջարկություններ մինչև 2030 թ. կայուն զարգացման ասպարեզում՝ ձևակերպելով 17 նպատակներ: Այս փաստաթուղթը կփոխարինի Հազարամյակի զարգացման ութ նպատակներին և կքննարկվի 2015-ի սեպտեմբերին ՄԱԿ-ի համաշխարհային գագաթնաժողովում: Նոր նպատակներից մեկն է՝ վերջ դնել քաղցին, հասնել պարենային անվտանգության և սնուցման բարելավման, աջակցել կայուն գյուղատնտեսությանը:

# Աշխարհ և քաղաքականությունը



Ի՞նչ գիտենք մենք սննդի անվտանգության մասին

2015 ÷ »i նի՝ Յ ն

»Yi x3 ն ՆՅ 1 ի՝ ՅՅ  
www.WomenNet.am



Ազատելի կանանց կոոպերատիվի քերթախավաքը

»BԵՅ նՆYՅ éՅ Yó éáí Շ

## Կանայք կերակրում են մոլորակը

ՄԱԿ-ը փաստում է, որ կանայք առանցքային դեր են խաղում պարենային անվտանգության և կենցաղային բարեկեցությունն ապահովելու հարցում: Զարգացող երկրներում տնտեսապես ակտիվ կանանց 79%-ը զբաղված է գյուղատնտեսությամբ՝ սննդամթերք արտադրելով: Կանայք կազմում են գյուղատնտեսությունում աշխատուժի 43%-ը: Այդուհանդերձ, թերսնման պայմաններում ապրող մարդկանց 60%-ը կանայք և աղջիկներ են: Մինչդեռ կին ֆերմերներին ավելի շատ ռեսուրսներ տրամադրելով՝ հնարավոր է աշխարհում 100-150 միլիոնով կրճատել քաղցած մարդկանց թիվը:

Այսօր միջազգային բոլոր փաստաթղթերում աղքատության և սովի հաղթահարումը դիտարկվում է կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համատեքստում: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ), որդեգրելով «Կանայք սննդի անվտանգության բանալին են» մոտեցումը, զարգացման և պարենի անվտանգության խնդիր է համարում գյուղատնտեսության մեջ գենդերային անհավասարության վերացումը: Այդ նույն սկզբունքով է

առաջնորդվում նաև արդեն 20 տարի Հայաստանում գործող Օքսֆամ միջազգային կազմակերպությունը, որի առաքելությունն է պայքար աղքատության և անարդարության դեմ: Կազմակերպության 2011-ից սկիզբ առած GROW քարոզարշավն իր «Աշխարհն առանց սովի» կարգախոսով համահունչ է ՊԳԿ-ի հիմնական տեսլականին՝ սովից և թերսնմանից ապահովագրված աշխարհի մասին: «Օքսֆամ Հայաստանը» ընդգծված ձևով ներառում է գենդերային բաղադրիչը իր բոլոր ծրագրերում՝ առաջնորդվելով

«Կանայք մեր ծրագրերի սիրտն ու հոգին են» կարգախոսով:

Այս կարգախոսը համադրելի է նաև 2014-ից մեկնարկած «Հարավային Կովկասում ազգային ռազմավարությունների ու փոքր ձեռնարկատերերի միջոցով պարենի անվտանգության բարելավման» Օքսֆամի քառամյա ծրագրի նպատակներին: Ծրագիրը կնպաստի Հայաստանում պարենային անվտանգության բարելավմանը, կխթանի սննդի տեղական արտադրությունն ու սպառումը՝ ներգրավելով նաև կանանց ներուժը: Բարձրածայնելով ավելի քան 50.000 մանր ֆերմերների կարիքներն ու խնդիրները՝ այն կաջակցի Հայաստանում պարենային անվտանգության համակարգի կայացմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի ու Օքսֆամի կողմից, կտևի մինչև 2017 թ.:

§¶ ԱճճՍՄՁ»նս՝ Յ նի՝ Յ 1 նաճ 1 ՇY Ն»նաճ-2015!

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, Օքսֆամը և Գյուղատնտեսական դաշինքը հրավիրում են ձեռք միասին տոնելու կանանց միջազգային օրը և մասնակցելու «Գյուղմթերքի կին հերոս-2015» ազգային մրցանակաբաշխությանը, որը տեղի կունենա մարտի 6-ին, ժամը 12.00-ին, «Արմենիա Մարիոթ» հյուրանոցի Արարատ դահլիճում:

Այս տարի «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2015» մրցանակաբաշխությունն անցկացվում է հինգերորդ անգամ: Նպատակն է խրախուսել ՀՀ-ում գյուղատնտեսության և ֆերմերային տնտեսության ոլորտներում գործունեություն ծավալող և հաջողության հասած կանանց, ովքեր իրենց գործունեությամբ նպաստել են համայնքների կայուն զարգացմանը, պարենային անվտանգությանը և սնուցման բարելավմանը՝ դրական փոփոխություններ առաջացնելով իրենց շրջապատում: Միջոցառումը կուղեկցվի գյուղատնտեսության ոլորտի հերոս կանանց կողմից արտադրվող գյուղմթերքների ցուցահանդես-վաճառքով և համատեքստով:

Այս տարվա մրցանակաբաշխության հիմնական թեման է կանանց դերը պարենի անվտանգության հարցում: Մենք գրուցեցինք դրա շուրջ «Գյուղմթերք արտադրող կին հերոս-2015»-ին առաջադրված թեմաներից մի քանիսի հետ:

«Չ են ուզում չափազանցնեն, բայց այդպիսի մարդ չկա, որ մեկ անգամ համտեսած չլինի իմ պատրաստած ջրերից, պանուց ու սուջուխից, որ երկրորդ անգամ ցանկություն չհայտնի կրկին համտեսելու ու զնելու»,- պատմում է Արագածոտնի մարզի Աղծք գյուղից Գայանե Նազարյանը ու հավելում, որ հենց դա դարձավ պատճառ, որ նա ավելի քան 20 տարի առաջ որոշեց զբաղվել այս գործով: «Անուսիճ սկզբում դեմ էր, ասում էր՝ ռիսկի ենք դիմում, ո՞վ է չիր առնելու, մարդիկ հիմա չեն կարողում

նում հաց անգամ առնել, փող կտա՞ն չիր կանանց: Ասում էի՝ չէ՛, սա կոնֆետի պես բան է, չառնեն-չառնեն, զոնեն նոր տարվա համար կառնեն, հյուր ունենան՝ կառնեն... Մի խոսքով, կովով-դավով համոզեցի, հետո արդեն ամուսինս ինձանից շատ էր շահագրգռված ու ոգևորված: Հիմա ընտանիքի անդամներով՝ հարս, տղա, աղջիկ, սկեսուր, բոլորով միասին այս գործն ենք անում: Իմ շրջապատի մարդկանց էլ են խորհուրդ տալիս, ասում են՝ ավելի լավ է քո տան մեջ, քո դրան առաջ աշխատես, չարչարվես, քան գնաս դուրս, Ռուսաստան աշխատես ու երբեմն էլ առանց գումարի վերադառնաս»,- պատմում է մեր գրուցակիցը: Տիկին Գայանեի հետ գրուցելով անցնում ենք փոքրիկ շքերթի բոլոր անկյուններով, ուր միախառնված էր մաքրության ու չրերի անուշ բույրը: Այս դեպքում



հիշում են ժողովրդական ասացվածքը, թե «անկյունում յուղ թափես՝ կհավաքես»: «Մեզ մոտ ամեն ինչ բնական եղանակով է կատարվում՝ մրգերի պատրաստման եղանակից սկսած մինչև վերջին գործողությունը: Չենք չորացնում ջերմոցային կամ էլեկտրական սարքերի միջոցով, այլ արտվ ու քամով»,- ասում է տիկին Գայանեն, ում արտադրանքը ներկայացվել է ցուցահանդեսներում, հասել անգամ մինչև Մոսկվա ու ԱՄՆ:

Շարունակությունը՝ 2-րդ էջում



ԹՅՈՒՆՆԵՐ ԻՅՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ գիտենք մենք սննդի անվտանգության մասին

Պարզելու համար, թե մեր քաղաքացիներն ինչ գիտեն և ինչ պատկերացումներ ունեն սննդի անվտանգության մասին...



«Ի՞նչ համար սննդի անվտանգությունն առաջին հերթին փողոցային առևտրից չօգտվելն է...»

ապա արտաքինից կարող է թվալ, թե ամեն ինչ շատ մաքուր է և կոկիկ փաթեթավորված...

Չարցվածներից շատերն ընդգծում էին սննդում քիմիական տարրերի բացակայությունը...

Մեր հասարակությունում սննդի անվտանգության վերաբերյալ պատկերացումները խիստ սահմանափակ են...

ԾՁՆՆԵՐ ԻՅՅՈՒՆՆԵՐ

«Ընթացիկների առողջ սննդակարգը կանանց ձեռքբերում է»

«Անգամ կենցաղային մակարդակում ընտանիքի սննդի կազմակերպման ծանր գործը կանանց ունեցնում է դրված, հետևաբար իրենց ընտանիքներն առողջ սննդով ապահովելու և ճիշտ սննդակարգ ընտրելու պատասխանատվությունն էլ կլինի և կրուն»...

Ուզանա Ղազարյանը ուղիղ կապ է տեսնում սննդի որակի և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի ու արդատության ցուցանիշի միջև...

օգտագործում կամ ձմռան համար սնունդը պահեստավորում են, թեպետ գյուղացիներն էլ կան...

Նրա կարծիքով՝ առողջ սնունդն ու սննդի անվտանգության խնդիրն այսօր Հայաստանում լուրջ ուսումնասիրության կարիք ունի...

Նա չի բացառում նաև կոռուպցիոն ռիսկերը սննդի արտադրության և վերահսկման ոլորտում...

տուններով և այլն»,- Ենուն է նա: Ղազարյանը դրական է համարում հատկապես երիտասարդության շրջանում սննդի պիտանիության ժամկետն ստուգելու բժախնդրությունը...

Ի դեպ, Ռուզաննա Ղազարյանը «Կայոց ծորի պլանդակային խոհանոց» գրքի հեղինակն է:

Մասնագետի դիտարկմամբ՝ կնոջ կրթական բարձր ցեղը ամվտանգ սննդի ապահովման տեսանկյունից կարևոր է այն առումով, որ կանայք իրենց գիտելիքները զարգացնելով, հնարավորություն ունեն լրացուցիչ եկամուտ վաստակել և բարելավել ընտանիքի կենցաղը...

Մասնագետի դիտարկմամբ՝ կնոջ կրթական բարձր ցեղը ամվտանգ սննդի ապահովման տեսանկյունից կարևոր է այն առումով, որ կանայք իրենց գիտելիքները զարգացնելով, հնարավորություն ունեն լրացուցիչ եկամուտ վաստակել...

ԶՈՒՆՆԵՐ ԻՅՅՈՒՆՆԵՐ

«Հացը ստեղծում ենք՝ դարձնելով դարձիկները»

Աստղիկ Հակոբյանը և Սուսաննա Սաղոյանը Ազատիկ համայնքում «Օբսֆամ-Հայաստանի» և «Բիտեխ»-ի աջակցությամբ ստեղծած օբստրուկտի տնտեսության ակտիվ անդամներից են:

Ինչ երեխաների համար ամենօրյա ճաշն ապահովելու խնդիրն իրական գլխացավանք է դարձել տիկին Սուսաննայի համար:

ընտանիքի միակ եկամուտն ամուսնու աշխատած 80 հազար դրամն է ու իր և հիվանդ երեխայի թոշակը՝ միասին մոտ 40 հազար է կազմում:

Մյուս տղաս էլ եր թոշակ ստանում, արդեն մի տարի է՝ չեն տալիս, ասում են՝ պետք է ամիսը էպիլեպսիայի չորս դեպք գրանցվի իր մոտ, որ նորից հաշվառեն նպաստի համար, ում բողոքեմ չգիտեմ,- սրտեղում է տիկին Սուսաննան և ցույց է տալիս վառարանի կողքին մահակակալի վրա տաք ծածկոցով փաթաթված տղային, ով արդեն երկրորդ օրն է՝ դպրոց չի հաճախում:

Երկուսն էլ լավ են սովորում, բայց տղաս դիմադրողականություն չունի, թեթև քամի՝ հիվանդանում է, մեկ օր դպրոց է գնում, հենա, արդեն հազում ա... - որդուն նայելով ասում է տիկին Սուսաննան: - Ինչ ասեմ, զոհե յոյա տանելիք է չկա, մատառողջ են, զոհե այն միմիմալը կարողանամ պահանջել, մի քիչ էլ իրենց ուզածն առնեն:

ավարտվում է ամենօրյա անլուծելի դարձած խնդիրներով՝ դեղորայք, բուժման անհրաժեշտություն երևանում, հագուստ, սնունդ...

46-ամյա տիկին Աստղիկը մոյսպես բազմազան մայր է, երեխաներ է մեծացնում: Նրանցից երեքն արդեն չափահաս են ու փորձում են մոր հոգսը թեթևացնել, սակայն գյուղում անգամ հասնապարտից հացը հաճախ մեծագույն խնդիր է դառնում ընտանիքի համար:

Այլուր, պետև, մակարոն... Ես ամեր սնունդը: Հա, ես ամ մայրը, ես ամ մասնուն, փորձում լուծել հացի խնդիրը: Ամեն ինչը թանկ, թանկանում էլ ամ օրի, արի ու հասցրո...

Ընտանիքի վիճակը էլ ավելի է վատացել, երբ տիկին Աստղիկի ամուսնու մոտ թաղցկեղ է հայտնաբերվել: Բուժման համար անհրաժեշտ գումար չունի ընտանիքը:

Ասել են՝ դրսում կարող են վիրահատել, կլավանա, բայց, դե, հնար չկա, ինչ անենք, թողնելու էլ չի, օգնություն ամ պետք: Ես մեր դռան կողքի հողակտորն ամ, ուրիշ ոչ այգիներ ունենք, ոչ էլ կողմնակի եկամուտ: Թոշակն ամիսը 40 հազար գումար է կազմում: Մի կերպ ծերը ծերին ենք հասցնում ու էլի պարտքով,- սրտեղում է տիկին Աստղիկը:

ՄԵԿ ԵՎ ԿԵՐԱՍԿԻՆՈՒԹՅՈՒՆ

Մեկ տարում հացանքերի գինը աճել է 10,4%-ով, ձվինը՝ 6,2%-ով



ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների համաձայն՝ հացանքերի ապրանքախմբում 2015 թ. հունվարին, 2014 թ. հունվարի համեմատությամբ, արժանագրվել է 10,4% աճ: Նշենք, որ բնակչության մասնաբաժինը, որոնց սննդակարգի 70%-ից ավելին բաժին է ընկնում հացանքերին և կարտոֆիլին, 20 տոկոս է:

Ըստ ԱԿԾ-ի՝ վերջինս հիմնականում պայմանավորվել է բարձր տեսակի հացի՝ 4,5%, սպագետտիի՝ 4,8%, մանկական շիլայի՝ 6,0%, հնդկացորենի՝ 6,6%, ոսպի՝ 6,7%, սիսեռի՝ 6,9%, մակարոնեղենի՝ 10,0%, բլրուրի 14,0% գնաճով:

Մեկ տարվա կտրվածքով ձվի համրապետական միջին գինը աճել է 6,2%-ով: Ինչ վերաբերում է շաքարավազին, ապա միջին գինը աճել է 10,8%-ով:

Դեկտեմբերի համեմատությամբ մասնաբաժինը հունվարին բարձրացել է 5,9 տոկոսով, իսկ կաթնամթերքը՝ 13,2%-ով: Նույն ժամանակահատվածում բանջարեղենն ու կարտոֆիլը թանկացել են 14 տոկոսով, միրգը՝ 8,4 տոկոսով:

Հայաստանի բնակչության 60 տոկոսը ստանում է օրական 2100 կկալ-ից ցածր սնունդ



Չնայած Հայաստանում աղքատ է բնակչության 32 տոկոսը, սակայն 60 տոկոսը սպառում է 2100 կկալ-ից ցածր սննդամթերք, այսինքն՝ թերսնվում է: Թերսնվող բնակչության մասնաբաժնում հատկապես բարձր է երեքից ավելի երեխաներ ունեցող ընտանիքների թիվը:

Մեր երկրում մեկ շնչի հաշվով նվազագույն պարենային զանրությունը արժեքը 32 հազար 727.5 դրամ է՝ ամսական կտրվածքով: Նշենք, որ նվազագույն պարենային զանրությունը ներկայացնում է 11 տեսակ սննդամթերքի նվազագույն չափաբաժինը, որն անհրաժեշտ է չափահաս մարդու օրականից: Պարենային զանրությունը էներգետիկ արժեքը օրական կտրվածքով կազմում է 2412.1 կկալ:

2013 թ. աղքատության վերին գիծը կազմել է 39 հազար 193 դրամ, իսկ ստորին գիծը՝ 32 հազար 318 դրամ: Ամսական այս գումարից ավելի քիչ եկամուտ ունեցողները համարվում են «շատ աղքատ»: Այդպիսիք, ըստ ԱԿԾ-ի, կազմում են բնակչության 13,3%-ը:

Բնակչության 2,7%-ը համարվում է ծայրահեղ աղքատ, քանի որ նրանց ամսական եկամուտն ավելի քիչ է, քան պարենային աղքատության գիծը, որը 2013 թ. կազմել է 22 հազար 993 դրամ: Այս դեպքում մարդիկ համարվում են «թերսնվող»՝ կիսաաղքատ:

Պարենային զանրության հիման վրա հաշվարկվում է նաև սպառողական զանրությունը, որը սննդամթերքից բացի ներառում է անհրաժեշտ նվազագույն այլ ծախսերը (հագուստ, կոնդենսվ լծարներ և այլն): Սննդամթերքի մասնաբաժինը կազմում է «զանրություն» արժեքի 56,5%-ը, իսկ ոչ մթերային ապրանքներն ու ծառայությունները՝ 43,5%: Նվազագույն սպառողական զանրության արժեքը ամսական կտրվածքով կազմել է 57 հազար 927.6 դրամ: Նվազագույն ամսական աշխատավարձը Հայաստանում 50 հազար է:

աճՇ ԵՄ՝ ՇՆ



Խանութի մասշտաբային շառաւիղները Հայաստանում

Հայաստանի զարգացման նպատակներից 7-րդը Հր-ջակ միջավայրի պահպանությունն է: Դրա շրջանակներում նախանշված երեք բիրտխման մեկը անվտանգ խմելու ջրի մատչելիությունն է:

2013 թ. հետազոտության տվյալներով՝ քաղաքային տնային տնտեսությունների 99,9%-ը և գյուղաբնակ տնային տնտեսությունների 96,3%-ն ունի կենտրոնացված ջրամատակարարման համակարգ: Կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների 91,0%-ի մոտ ջրի ծորակը գտնվում է տանը, 7,1%-ի մոտ՝ բակում, իսկ 1,9%-ի մոտ՝ փողոցում:

Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեցող տնային տնտեսությունների միայն 57,8%-ն է ունեցել շուրջօրյա ջրամատակարարում, տնային տնտեսությունների 13,1%-ը ջուր է ունեցել օրական 1-5 ժամ: Հանրապետությունում տնային տնտեսությունների 0,1%-ը ջուր է ունեցել ամսական 1-7 օր, 0,7%-ը՝ 2 շաբաթ, 3,7%-ը՝ 3 շաբաթ:

Խոհանոցի, սառը ջրի, ողողվող զուգարանի և լողարանի միաժամանակյա առկայություն (գործող) գրանցվել է գյուղական բնակավայրերի միայն 10,0% տնային տնտեսությունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում նման տնային տնտեսությունները կազմել են 84,4%:

Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունը կապված է քաղաք-գյուղ տարբերությունը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում են երևանի գրեթե բոլոր բնակիչները (98,6%), այլ քաղաքային բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգ ունի տնային տնտեսությունների 93,7%-ը, մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում է տնային տնտեսությունների միայն 17,5%-ը:

Բազարան. ջրի ճամփա

«Է՛, աղջիկ ջան, մենք էնքան ենք խոստացել էր թեմայի մասին, որ արդեն հոգնել ենք: Ամեն անգամ գյուղ եկող ժուռնալիստին ասում ենք, պատմում ենք, մեր խնդրի մասին խոսում ենք, բայց ի՞նչ օգուտ: Գնում գրում են, որ Բազարանը ջուր չունի, է հետո՞: Պաշտոնյաներն էլ մեր գյուղ գալիս են մեզնակ ընտրությունից ընտրություն, էն էլ՝ ձեն մուրալու համար», - իրենց խնդրի մասին խոսելուց հոգնած ու վրդովված պատմում են Արմավիրի մարզի Բազարան համայնքի բնակիչները:

Մարզկենտրոն Արմավիրից 50 կմ և Թուրքիայի սահմանից ընդամենը 300 մետր հեռավորության վրա գտնվող Բազարան համայնքում խմելու ջուր չկա ու երեք էլ չի եղել: Մոտ երկու տասնամյակ առաջ Բազարանում խմելու ջրի ցանց են կառուցել, բայց շահագործման չեն հանձնել: Բազարանցիները խմելու և ընդհանուր օգտագործման ջուրը կուտակում են գյուղի ծայրամասում գտնվող «Գորտի» աղբյուրից, որտեղից էլ օգտվում են գյուղի շուրջ 600 բնակիչները: Իսկ այդ «անմահական» ջուրը բազարանցի կանայք տուն են հասցնում իրենց հայրական «փոխադրամիջոցով» դանթարով:

«Ղանթարով ջուր բերելը տղամարդկանց համար անոթ է», - կատակում են բազարանցի տղամարդիկ, բայց միևնույն ժամանակ նկատում, որ իրենց կանայք այնքան են դանթարով ջուր կրել, որ մեջքներն ու ուսերը ջուր կրելու ծանրությունից կորացել են: «21-րդ դարում ենք ապրում, բայց դեռ դանթարով ջուր ենք բերում: Բա սա ապրել է, որ մենք ենք ապրում», - ասում է գյուղի հնաբնակներից Կոստիկ Պետրոսյանը: Տիկին Ռիման էլ հավելում է, որ հատկապես անձրևոտ օրերին ավելի անտանելի է դառնում ջուր կրելը: «Մինչև վիզ ցեխի մեջ կուտում են, մինչև ջուր են բերում: Սա ապրել չի, որ մենք ենք ապրում»:

Տիկին Քնարիկը Բազարանում է ծնվել ու երբևէ չի հիշում, որ ծնունդից ջուր եկած լինի, հիմա էլ հույս չունի, թե խնդիրը կլուծվի: Մխիթարվում է նրանով, որ աղբյուրին մոտ է ապրում: «Մեր գյուղի հիմնական խնդիրը հենց ջրի հարցն է: Բազմիցս դիմել են պատկան մարմիններին, բայց մինչ օրս ոչ մի քայլ այդ ուղղությամբ չի ձեռնարկվել», - ասում է գյուղական համայնքի ղեկավար Գևորգ Մարգարյանը:

Վերջինիս խոսքով՝ 90-ականներին կառուցված ներքին ցանցն այլևս վերանորոգման ենթակա չէ, ջրի ցանցն առանց նախագծի է կառուցվել, դրա պատճառով էլ գյուղը ջուր չի ունեցել: Հիմա գյուղական համայնքը մոր ցանց կառուցելու հնարավորություն չունի: Գյուղապետն ասում է՝ համայնքն ի վիճակի չէ մաս ֆինանսավան մերդրում կատարելու: Նկատենք, որ այդ միակ կենարար աղբյուրի ջուրը, որը գյուղից հեռու է մոտ 2 կմ, չի համապատասխանում խմելու ջրի չափանիշներին: «Կոյուղաջրեր, անձրևաջրեր՝ ինչեր ասես խառնվում, ջրի հետ գալիս են: Անգեմ աչքով էլ երևում է, որ ջուրը մաքուր է: Միայն Աստուծոց է, որ մինչ այսօր ինՖեկցիա չի բռնկվել», - ասում են գյուղացիները:

2ՆՅ 1/2Յ Կ.

«Յուրաքանչյուր հինգերորդ երեխան Հայաստանում թերաճ է»



Հայաստանում յուրաքանչյուր հինգերորդ երեխան ջրոնիկական թերսնման խնդիր ունի, ինչն անմիջապես ազդում է նրանց ֆիզիկական և մտավոր զարգացման վրա: Որպես հետևանք՝ մինչև 5 տարեկան երեխաների 37 տոկոսն սակավարյունություն ունի, ինչը բավական բարձր ցուցանիշ է համարվում:

Հայաստանում մինչև 5 տարեկան երեխաների 19 տոկոսը թերաճ է, 8 տոկոսը՝ խիստ թերաճ, այսինքն՝ իրենց տարիքի համեմատ շատ կարճահասակ են: Այս ցուցանիշը, ինչպես պարզաբանում է Առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ Նուբե Փաշայանը, ջրոնիկական թերսնման մասին է խոսում: Այն տարիների ընթացքում է ձևավորվում, եթե երեխան թերի է սնվում սպիտակուցային սնունդով և հիմնականում սնվում է ածխաջրերով: Երեխայի թերաճը ոչ միայն ֆիզիկական, այլ նաև մտավոր զարգացման խնդիր է: Պատահական չէ, որ մասնագետները հատկապես կարևորում են ճիշտ սնուցման հարցը կյանքի առաջին 1000 օրը, երբ զարգանում է երեխայի գլխուղեղը:

Թերսնման թիվ մեկ գործոնը, մասնագետների գնահատմամբ, աղքատությունն է: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ 0-5 տարեկան երեխան ապրում է աղքատ ընտանիքում, և դրա ազդեցությունը թերսնման վրա անշուշտ շատ էական է: Հաշվի առնելով այն, որ աղքատության մակարդակը հատկապես բարձր է երեխաներ ունեցող ընտանիքներում, ակնհայտ է, որ նրանք չեն կարողանում իրենց թույլ տալ սպիտակուցային սնունդ գնել՝ միս, կաթնամթերք ու ձկնեղեն, որոնք, ըստ մասնագետների, մինչև 5 տարեկան երեխաների սննդակարգում ամեն օր պետք է լինեն: Վիճակագրական տվյալները փաստում են, որ նրանք հիմնականում էժան, շուտ հագեցնող և ոչ օգտակար սնունդ են օգտագործում՝ կարտոֆիլ, մակարոնեղեն, հաց ու քաղցրավենիք: Խնդիրը մեծ մասամբ սոցիալական է, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների թերաճության խնդիրը, ճիշտ է՝ հազվադեպ, բայց բարեկեցիկ ընտանիքներում էլ է հանդիպում: Կամ՝ հարուստ ընտանիքներում կարող են երեխային շատ կերակրել, բայց չտալ այն, ինչ պետք է: Այսինքն՝ ոչ միայն աղքատությունն ու սննդի պակասն են թերաճի պատճառը, այն նաև ոչ ճիշտ սննդակարգը, որը հաճախ մայրերի գիտելիքների պակասի հետևանք է:

Մի կարևոր փաստ. մոր կրթության մակարդակն ուղիղ համեմատական է երեխայի սնուցմանը: Բարձրագույն կրթություն ունեցող մայրերի երեխաների շրջանում թերսնուցման մակարդակը ցածր է, իսկ կրթական ցածր մակարդակ ունեցող կանանց շրջանում երեխաների թերաճը շուրջ 22 տոկոս է:

Ինչպես և ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում թերաճությանը զուգահեռ առկա է նաև գերքաշության խնդիր: Հայաստանի մինչև 5 տարեկան երեխաների 15 տոկոսն ունի գերքաշություն, ինչը նույնպես խոսում է չբավարարված սննդակարգի մասին:

«ՆՅ ԿԱՕՒՄՆԵՐԿԱՆ ԵՆՑ ԵՆՑ ԻՅ ԿԱՕՒՄՆԵՐԿԱՆ»

Կանայք հանուն առողջության և առողջ տղայի միջավայրի

«Այսօր թունաքիմիկատ վաճառում են ոչ միայն սերտիֆիկացված կազմակերպությունները, այլև՝ անհատներ: Գյուղացին ձեռք է բերում թունաքիմիկատ շատ հաճախ առանց ժամկետներին հետևելու, առանց գիտելիքների ունենալու այդ նյութի հետևանքների, պաշտպանիչ անհրաժեշտ միջոցների մասին», - պատմում է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ տղայի միջավայրի» ՀԿ հիգիենայի և էկոլոգիական ռիսկերի բաժնի ղեկավար Լիլիկ Սիմոնյանը:

Մենք, որ կազմակերպությունը արդեն 16 տարի է, ինչ զբաղվում է շրջակա միջավայրի աղտոտվածության հիմնահարցերով և գյուղատնտեսությունում թունաքիմիկատների օգտագործման խնդիրներով: Այս հարցերով իրագրվածությունը բարձրացնելու նպատակով բազմաթիվ հանդիպումներ են ունենում համայնքներում, գրքեր ու բուկլետներ են բաժանում:

Մեր հիմնական թիրախը Արմավիրի և Արարատի մարզերն են, քանի որ այնտեղ է՝ նախկինում, և՛ հիմա շատ են օգտագործվում թունաքիմիկատներ: Այսօր մոտ 600 անուն թունաքիմիկատ է մտնում Հայաստան, մենք ունենք ամբողջ ցանկը և փորձում ենք իրագրված աշխատանքներ կատարել, ինչը հատկապես կարևոր է այսօրվա գյուղերում գյուղատնտես մասնագետների պակասի պայմաններում: Լիլիկ Սիմոնյանը նշում է, որ թունաքիմիկատները, իհարկե, իրենց ազդեցությունն են ունենում բոլորի վրա, բայց հատկապես խոցելի են կանայք:

«Գիտե՛ք՝ այսօր գյուղերում տղամարդիկ գրեթե չկան, մեկնում են երկար ամիսներով, անգամ տարիներով արտագնա աշխատանքի, ու այդ հոգսը մնում է կնոջ ուսերին», - նշում է տիկին Սիմոնյանը և հավելում, որ շատ դեպքերում ավերակ երևույթներ են նկատվում, իսկ ոչ գրագետ օգտագործումը կանանց ներքին օրգանների վրա էլ կարող է ազդեցություն ունենալ, օրինակ՝ քլորօրգանական թունաքիմիկատները, որոնք կուտակվելու հատկություն ունեն:

Եթե ոչ թունաքիմիկատ, ապա ի՞նչ օգտագործել: Այս ամենի լուծումը, ըստ ագրոէկոլոգ Լուսինե Նալբանդյանի, էկոպարարտամյութերն են: Լուսինեն, ի դեպ, նույնպես «Հայ կանայք հանուն առողջության»



և առողջ տղայի միջավայրի» ՀԿ անդամ է:

Իրականացրել ենք մոտ 30 ծրագիր, որոնց արդյունքում օրգանական պարարտամյութերի արտադրության փոքրիկ կենտրոններ ունեցանք: Այսօր 8 համայնքում մոտ 60 մման հենակետեր ունենք, ստանում ենք կոմպոս, որը օրգանական տարբեր նյութերի քայքայման արդյունքում առաջացած օրգանական զանգված է, և կենսա-

հունու՝ կալիֆորնիական որդերի միջոցով ենք ստանում: Հրատարակել ենք նաև «Թունաքիմիկատներին այլընտրանք» գրքուկը, որը ներկայացնում է տարբեր բուսական թուրմերի բաղադրատոմսեր: Լուսինե Նալբանդյանը նշում է, որ այս տարիների ընթացքում ծրագրեր շատ են եղել, ստեղծել են գյուղատնտեսական դաշտային դպրոց, որի նպատակն է եղել գործնական գիտելիքներ փոխանցել գյուղաբնակներին, ինչպես նաև հատուկ չորանոցներ՝ շեր պատրաստելու համար, որը այսօր մոտ 10 համայնքում կիրառվում է մեծ քանակությամբ:

ՄԱԿ-ի փորձագետների գնահատականներով՝ Աշխարհում արտադրվող սննդամթերքի գրեթե կեսը այս կամ այն պատճառով թափվում է, մինչդեռ յուրաքանչյուր վեց վայրկյանում աշխարհում սովից կամ դրա հետևանքով առաջացող հիվանդություններից երեխա է մահանում:

Austrian Development Cooperation logo and OXFAM logo. Text: Համարի վրա աշխատել են՝ Լիլիկ Քոչինյանը, Արման Ղարիբյանը, Մարիաննա Ղարիբյանյանը, Արմինե Գևորգյանը, Լիա Խոջոյանը, Լալա Տեր-Ղազարյանը, Խոսրով Խլոլաթյանը. Խմբագիր՝ Թամարա Դովնաթյանյան էլ. huagb@womennetam@gmail.com